10440

ЗКСМЗ 147-57
h-62

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
2 4 SEP 2006
3КСМ3(47.925)
Ի-62

ՀԼԿՅԵՄ ԳՐԱԴԱՐԱՆ

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՈՒՄԸ ՀԼԿՅԵՄ-ՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1929

29-4
3КСМ3(47.925)

10440

2 6 APR 2013

ՊԵՏՀՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆՈՒՄ
Հր. № 981 Պատվ. № 505
Գրառ. № 2093(բ)—Տիրաժ 1,500

ՆԱԿԱԶ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԿՅԵՄ ԲՋԻՋՆԵՐԻՆ

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՈՒՄԸ ՀԼԿՅԵՄ-ՈՒՄ

Անցյալ տարվա հունիս ամսին ՀամԼԿՅԵՄ կենտկոմը կատարեց մեր կազմակերպության հետազոտումը։ Այդ հետազոտությունը յերևան հանեց հին ղեկավարության բոլոր սխալները և ժերկացրեց ՀԼԿՅԵՄ բոլոր թույլ կողմերն ու թերությունները։ Վորոնք են այդ սխալները, թույլ կողմերը և թերությունները։ Այդ հարցի պատասխանը տալիս է ՀամԼԿՅԵՄ-ի կենտկոմի բանաձևը Հայաստանի ԼԿՅԵՄ դրության և աշխատանքի մասին։

Այդ բանաձևում ասված է.

«Հայաստանի ԼԿՅԵՄ նախկին ղեկավարությունը թույլ է տվել խոշորագույն սխալ, անսկզբունք կերպով պաշտպանելով և քննադատության չենթարկելով կուսակցական հին ղեկավարությունը, վորը մի շարք խոշորագույն քաղաքական սխալներ է գործել (բնորոշել է Դաշնակցությանը վորպես մանր-բուրժուական կուսակցություն, դիֆֆերենցիալ մոտեցում չի ու-

նեցել դեպի ինտելիգենցիան, վճռական հակահարված չի տվել կուսակցության միքանի անդամների, որոնք Հայաստանում չեյին տեսնում կուլակին և նրա ազդեցությունը և այլն)։

«Կոմյերիտմիության նախկին ղեկավարության կողմից ազգայնական վտանգի թերագնահատումն ու մոռացության տալը պատճառ դարձավ, որ կազմակերպությունը թուլացրեց պայքարը յերիտասարդության համար՝ ընդդեմ նացիոնալիզմի ներկայացուցիչների—հակահեղափոխական կուսակցությունների և խմբակների (դաշնակների, մենշևիկների, տրոցկիստների և սպեցիֆիկ[illegible] եգեոլոգիայի մնացորդների), որի հետևանքով նկատելի կերպով աշխուժացավ յերիտասարդության բուրժուա-նացիոնալիստական կազմակերպությունների գործունեությունը (դաշնամոլ, յերիտասարդ մարքսիստներ, մենշևիկներ, ոպպոզիցիոն խմբակներ և այլն)»։

«...խոշորագույն աղավաղումն այն եր, որ բանվոր յերիտասարդությունը հիմնական հենարանը չեր այդ աշխատանքում»։

«Սոցիալիստական շինարարությանը ժամանակցելու հարցերը (արտադրության ռացիոնալացում, գյուղատնտեսության կոոպերացում, պայքար բյուրոկրատիզմի դեմ) կոմյերիտական բջիջների աշխատանքների առանցքը չեյին կազ-

մում... իսկ գյուղական կազմակերպությունների գործունեության մեջ տեղի ունեցին կուսակցության դասակարգային քաղաքականության կոպիտ սխալներ»

Իր վորոշումների մեջ ՀԱՄԼԿՅԵՄ կենտկոմը մատնանշում եր նաև հետևյալը.

«ՀԼԿԵՄ-ում կան նշանակալի քանակով դասակարգայնորեն և իդեոլոգիապես անհարազատ տարրեր»։

«...թուլություն ստորին կազմակերպությունների վերաբերմամբ միության կոմիտեների ցույց տված ղեկավարության մեջ, ակտիվի մի մասի կտրվածություն մասսաներից, [illegible]միութենական դեմոկրատիայի և ինքնաքննադատության թույլ ծավալում»...

«...ակտիվում կան անտոկուն, տատանվող, իսկ յերբեմն եյ ուղղակի դասակարգայնորեն անհարազատ տարրեր» և այլն։

Հետազոտությունն ավարտելուց հետո անցել է 10 ամիս։ Այդ ամբողջ ժամանակվա ընթացքում Հայաստանի ԼԿՅԵՄ հաստատակամ և լարված աշխատանք է կատարել՝ ուղղելու հին ղեկավարության սխալները, հաղթահարելու և վերացնելու աշխատանքի մեջ նկատվող թերությունները ու պակասությունները, առողջացնելու կազմակերպությունն՝ ամբողջությամբ ա-

ռած։ Այդ ժամանակամիջոցում քիչ բան չի արված։ Հետադարձ հայացք գցել, յերևան հանել և ստուգել, թե ինչ և ինչպես ե արվել, կազմակերպության վոր վերքերն են բուժվել, հետագայում ինչի վրա պիտի աշխատել, հետևապես ինչ վերքեր են մնում դեռևս չբուժված— այս ե ներկայումս ՀԼԿՅԵՄ գլխավոր խնդիրը։

Այդ բոլորը յերևան հանելու և ստուգելու նպատակով ՀամԼԿՅԵՄ Անդրյերկրամը ներկայումս մեր կազմակերպության հետազոտում ե կատարում։ Այդ հետազոտությունը կատարվում ե վորպես մասսայական ինքնաստուգում և ՀԼԿՅԵՄ առաջիկա համագումարի նախապատրաստություն։ Այդ նշանակում ե, վոր յուրաքանչյուր անհատ կոմյերիտական և յուրաքանչյուր կոմյերիտական բջիջ պետք ե իր տեղը գտնի ՀԼԿՅԵՄ այդ ինքնաստուգման աշխատանքի մեջ, պետք ե մասնակցի այդ աշխատանքին։

Այստեղ վոչ մի դժվար բան չկա։

Մեր կազմակերպության մասին ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի կայացրած վորոշումների իրագործման վրա աշխատել են շատ կոմյերիտականներ և ՀԼԿՅԵՄ շատ բջիջներ։ Հարկավոր ե յերևան հանել և պարզել, թե ինչ ե արել յուրաքանչյուր տվյալ բջիջ Կենտկոմի վորոշումների իրագործման ասպարիզում։ Այս աշխատանքը կարող են և պետք ե կատարեն բոլոր բջիջներն ինքնուրույն կերպով, իրենց ուժերով, չսպասելով վերից տրվող դիրեկտիվների։

Բայց ինչպես կազմակերպել և կատարել ինքնաստուգումը բջիջում։

Բջիջներում պետք ստեղծել կամավոր խմբակներ և կորիզներ։ Յուրաքանչյուր այդպիսի խմբակ կամ կորիզ պետք ե հանձն առնի ստուգել, թե իրենց բջիջը ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի վորոշումների այս կամ այն հարցի վերաբերմամբ ինչ և ինչպես ե արել։

Խմբակներ և կորիզներ կարելի յե ստեղծել մոտավորապես հետևյալ հարցերով զբաղվելու համար.—

1. Իդեոլոգիական աշխատանքի հարցեր.— Բջիջն ինչպես ե պայքարում նացիոնալիզմի արտահայտությունների դեմ բջիջում և յերիտասարդության շրջանում, ինչպես ե կատարվել աջ թեքման, դաշնակիզմի, սպեցիֆիզմի և տրոցկիզմի իդեոլոգիայի բնության մերկացումը, բջիջն ինչպես ե պայքարում հոգևորականության և աղանդավորների ազդեցության դեմ յերիտասարդության մեջ և այլն։

2. Սոցիալիստական շինարարությանը մասնակցելու հարցեր.—Քաղաքում.—Բջիջն ինչ-

պես է կատարում ռացիոնալացման աշխատանքը, ինչպես է պայքարում անտնտեսավարության, բրակի, գործալքուածների (պրոդուլ) դեմ, արտադրանքի ինքնարժեքի իջեցման համար. ինչպես է լուծում յերիտասարդության նյութական կենցաղային հարցերը (բրոնյա, ուսուցում, փոխադրություն մեկ կարգից մյուս կարգ և այլն), ինչպես է բավարարում նրանց այդ պահանջները։ Գյուղում.—Բջիջն ինչպես է կիրառում կուսակցության քաղաքականությունը, ինչ և ինչպես է անում գյուղի սոցիալիստական վերակառուցման համար (կոլտնտեսությունների, զանազան գյուղատնտեսական արտելների և ընկերությունների կազմակերպություն, կոնտրակտացիայի կնքման աշխատանք, վարկերի բաշխում, տնտեսավարության կուլտուրական յեղանակների գործադրություն, բատրակների քաղաքական և տնտեսական շահերի պաշտպանություն և այլն)։

3. ԼԿՅԵՄ զտման հարցեր.—Բջիջում ինչպես է կատարվել զտումը, ազատված է բջիջը դասակարգայնորեն և իդեոլոգիապես անհարազատ տարրերից, ինչպես է ընթանում բատրակ և չքավոր յերիտասարդության ներգրավումը կոմյերիմիության շարքերը, ինչպես է ազդել զտումը բջիջի դասակարգային զգացողության և գործնական աշխատանքի վրա և այլն։

4. Նոր ձևով աշխատելու հարցեր.—Բջիջը ինչպես է վերակառուցել և ինչպես է վերակառուցում իր աշխատանքը քաղաքում կուլտարշավի և կոլլեկտիվ (հավաքական) պայմանագրերի կամպանիայի շուրջը. գյուղում՝ բերքարշավի և խորհուրդների ընտրության կամպանիայի շուրջը։

5. Ղեկավարության հարցեր.—Ինչպես է լուծված ղեկավարության վերակառուցման խնդիրը (ձրի հրահանգչության սահմանումն, ղեկավարության հարմարեցումը առանձին շրջաններին (ռայոններին) և բջիջների առանձնահատկություններին, ստորին ակտիվի մասնակցությունը կոմիտեյին կից զանազան հանձնաժողովների աշխատանքներին, առաջարկումների մեթոդի կիրառում, ում է վստահված կոմյերիմիության ղեկավարությունը, ակտիվի վարակական կազմը և այլն)։

Ի՞նչպես և ինչից սկսել ինքնաստուգման խմբակների և կորիզների աշխատանքը։

Ամենաբանիմաց և ձեռներեց կոմյերիտականներն իրենց վրա պիտի վերցնեն ինքնաստուգման խմբակների և կորիզների կազմակերպության գործը։ Խմբակներում և կորիզներում աշխատող կոմյերիտականներին պետք է ծանոթացնել ՀամԼԿՅԵՄ կենտկոմի այն վորոշում-

ներին, վորոնց կատարման ստուգումն իրենց վրա յեն վերցրել տվյալ խմբակն ու կորիզը։ Դրանից հետո խմբակն ու կորիզն անցնում են գործնական աշխատանքների։

Խմբակների և կորիզների գործնական աշխատանքը բաղկացած է յերկու մասից, առաջին՝ ինչ է արված, յերկրորդ՝ ինչպես է արված։ Թե մեկը, թե մյուսը պետք է յերևան հանել և ստուգել խմբակային և անհատական զրույցների, յերիտասարդության զանազան խմբակների խորհրդակցությունների (ձեռնարկություններում՝ վորակյալ յերիտասարդ բանվորների, սև աշխատանք կատարող յերիտասարդության, գյուղում՝ կոմյերիտական տնատերերի, յերիտասարդ բատրակների խորհրդ. և այլն) և պատի լրագրերի միջոցով։ Այս և ուրիշ ճանապարհներով հավաքված բոլոր նյութերը հարկավոր է դնել խմբակների և կորիզների քննության. այստեղ մտքերի փոխանակությունից հետո արվում են յեզրակացություններ, կարվում է աշխատանքի գնահատականը, ապա այդ յեզրակացությունն ու գնահատականը, վորպես խմբակի կամ կորիզի կարծիքը, հանձնվում է բջիջի դռնբաց ժողովի քննության։

Խմբակների և կորիզների մեջ աշխատանքի բաշխումը պետք է կատարել կոնկրետ առաջադրումների մեթոդով։

Բայց այս դեռ բոլորը չէ։

Ինքնաստուգումը պետք է խթան հանդիսանա նոր թափ հաղորդելու մասսայական շարժմանը ՀԼԿՅԵՄ-ում՝ աշխատելու ՀամԼԿՅԵՄ-ի Կենտկոմի այն վորոշումների կատարման վրա, վորոնք դեռևս չեն կատարված։

Այս պատճառով ինքնաստուգման խմբակների և կորիզների աշխատանքը վոչ միայն այն, պետք է լինի, վոր նրանք յերևան հանեն այն, ինչ արված է, այլև այն, ինչ չէ արված, և ինչի վրա պետք է աշխատել հետագայում։

ՀԼԿՅԵՄ ինքնաստուգումը պետք է ընթանա բջիջային աշխատանքի վողջ սիստեմի վերակառուցման նշանաբանի տակ։ Սրանից հետևում է, վոր մեր անելիքը պետք է լինի արթնացնել կոմյերիտականների ստեղծագործ ձեռներեցությունը և ինքնագործունեությունը և կազմակերպել նրանց (նախաձեռնող խմբակների, կորիզների միջոցով) գործնականապես աշխատելու այն կոնկրետ խնդիրների վրա, վորոնք բղխում են ՀամԼԿՅԵՄ-ի Կենտկոմի վորոշումներից մեր կազմակերպության մասին։ Նոր ձևով աշխատելու սիստեմը յենթադրում է հատուկ նոր մոտեցում դեպի ցանկացած խնդրի իրագործումը։

Սկսեցեք բջիջում իրագործել ուղածդ խնդ-

դիրը, բայց այնպես, որ նա համապատասխանի կոմյերիտականների և ամբողջ յերիտասարդության իսկական շահերին, որնա շոշափի նրանց տրամադրություններն ու հոգսերը, և այդ կլինի սկիզբը նոր ձևով կատարելիք աշխատանքի։

Ինչից սկսել աշխատանքի վերակառուցումը բջիջներում։

Հարկավոր է յերևան հանել գործարանի, ֆաբրիկայի, դպրոցի կամ գյուղի յերիտասարդության ու կոմյերիտականների տրամադրությունները, պահանջներն ու կարիքները և ապա ոգնել համանման շահեր ունեցողներին միավորվելու և կազմելու գրուպպաներ, կորիզներ և խմբակներ՝ գործնական աշխատանք կատարելու համար։

Աշխատանքի նոր սիստեմը, նոր ձևով կատարվող աշխատանքը կոգնեն բջիջներին սերտորեն շաղկապելու իրենց կյանքը բանվոր և գյուղացի յերիտասարդության կյանքին, կոգնեն բջիջի ամենորյա աշխատանքի օբյեկտ դարձնելու յերիտասարդության ստորյա պահանջներն ու կարիքները։ Մյուս կողմից նոր ձևով կատարվող աշխատանքը, նախաձեռնության և կամավորության սկզբունքով կատարվող աշխատանքը կոգնի մեզ ամենակարճ ժամանակամիջոցում ավարտելու ՀԱՄԼԿՅԵՄ-ի Կենտկոմի կողմից մեր կազմակերպության մասին կատարած վորոշումների կատարումը։

Լուսաբանեցեք «Ավանգարդի» և «Խորհրդային Հայաստանի» եջերում այն բոլոր լավն ու վատը, որ յերևան կհանի ինքնաստուգումը ՀԼԿՅԵՄ աշխատանքի մեջ։ Նակազներ տվեք ՀԼԿՅԵՄ առաջիկա համագումարի մեր պատգամավորներին մեր կազմակերպության հետագա աշխատանքի մասին։

Զթագցնել ՀԼԿՅԵՄ թերությունները ու պակասությունները, խստագույն ինքնաքննադատության հիմունքով ստուգել, թե ինչ է արված 10 ամսվա ընթացքում և դեռ ինչ է մնում անել--այս է ներկայումս մեր գլխավոր խնդիրը։

ՀԼԿՅԵՄ Կենտկոմը կոչ է անում կոմյերիտական ամբողջ կազմակերպությանը լծվելու այս աշխատանքին։

ՀԼԿՅԵՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ԲԻՆԱՁԵՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՈՄՈԼԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լսելով Հայաստանի ԼԿՅԵՄ Կենտկոմի քարտուղար ընկ. Մեհրաբյանի զեկուցումը և Կենտկոմի պատասխանատու հրահանգիչ ընկ. Մարչիկի հարակից զեկուցումը կազմակերպության դրության և աշխատանքների մասին՝ Համ ԼԿՅԵՄ Կենտկոմը մատնանշում է—.

ՆԱԽԿԻՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ

1. ՀԼԿՅԵՄ նախկին ղեկավարությունն ամենախոշոր սխալը թույլ տվեց՝ անսկզբունք կերպով պաշտպանելով և չքննադատելով հին կուսակցական ղեկավարությունը, որը մի շարք խոշորագույն քաղաքական սխալներ եր կատարել (Դաշնակցություն կուսակցության ընորոշումը որպես մանր-բուրժուական կուսակցություն, ինտելլիգենցիային շերտավորման տեսակետից չմոտենալը, հակահարված չտալը կուսակցության այն միքանի անդամներին, որոնք չեյին տեսնում կուլակին և նրա ազդեցությունը Հայաստանում, և այլն),

Միության նախկին ղեկավարության կողմից ազգայնական վոանդի թերագնահատումը և մոռացության տալը կազմակերպությունը տարան դեպի յերիտասարդության համար մղվող պայքարի թուլացումը։ Միաժամանակ դրա հետևանքը յեղավ պայքարի թուլացումը նացիոնալիզմի ներկայացուցիչների—հակահեղափոխական կուսակցությունների և խմբակների (դաշնակների, մենշևիկների, տրոցկիստների և սպեցիֆիկյան իդեոլոգիայի մնացորդների) դեմ։ Յերիտասարդության ինտերնացիոնալիստական դաստիարակության խնդիրները պարզորոշ կերպով չեյին հակադրվում նացիոնալիզմի մնացորդներին և նրանց ազդեցությանը, որի հետևանքով նկատելի կերպով աշխուժացավ բուրժուական ազգայնական յերիտասարդական կազմակերպությունների (դաշյերիա, յերիտասարդ «մարքսիստները», մենշևիկները, ոպպոզիցիոն խմբակները և այլն) գործունեությունը։ Ազգային քաղաքականության ուղիղ կիրառման խոշորագույն աղավաղում է հանդիսացել նաև այն, որ բանվոր յերիտասարդությունը չի յեղել հիմնական հենարանն այս աշխատանքում։

ՀԱՄԼԿՅԵՄ Կ. Կ. ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է

Յելնելով սրանից՝ Համ ԼԿՅԵՄ Կենտկոմը որպես կենտրոնական խնդիր ՀԼԿՅԵՄ առաջ

դնում է իդեոլոգիական ֆրոնտում յերիտասարդության համար պայքարի ծավալումը։ Անհրաժեշտ է ակտիվ և բացարձակ պայքար մղել նացիոնալիզմի և նրա ներկայացուցիչների դաշնակների, մենշևիկների, տրոցկիստների, սպեցիֆիկյան իդեոլոգիայի դեմ, ոգտագործելով դրա համար Վրաստանի կազմակերպության փորձը։ Անհրաժեշտ է նացիոնալիզմի մնացորդներին պարզորոշ կերպով հակադրել կոմյերիտականների և աշխատավոր յերիտասարդության ինտերնացիոնալ դաստիարակությունը, առանձնապես կատաղի պայքար մղելով ազգայնական փոանգի թերագնահատման տենդենցների դեմ, ակտիվի պասսիվության դեմ՝ հանդեպ դասակարգային խորթ կազմակերպությունների։ Այս պայքարում բանվոր յերիտասարդությունը պիտի հանդիսանա հիմնական հենարանը։

Այս ամբողջ աշխատանքը պիտի կատարել հետևյալ ճանապարհով.—

ա) Կազմակերպության մեջ վճռականորեն կիրառելով ՀամԼԿՅԵՄ VIII համագումարի վորոշումները՝ ազգային հանրապետություններում և շրջաններում միության կատարելիք աշխատանքի մասին, քննության առնելով ու մշակելով այդ վորոշումներն ամեն մի բջիջում, տեղական մամուլը («Յերիտասարդ բայշևիկ» ամսագիրը, «Ավանգարդ» թերթը) տրամադրելով նացիոնալիզմի դեմ պայքարելու գործին՝ ինչպես յերիտասարդության շրջանում, այնպես և նացիոնալիզմի արտահայտությունների դեմ կոմսոմոլում, ցույց տալով նացիոնալիստական տրամադրությունների փաստեր կոնկրետ որինակների և մարդկանց վրա։ Միության մեջ կազմակերպելով հեղափոխական շարժման և կուսակցության պատմության սիստեմատիկ ուսումնասիրում և առանձնապես կոմկուսակցության կողմից բուրժուական-ազգայնական և սոցիալ դեմոկրատական կազմակերպությունների (մենշևիկներ, մուսավաթիստներ, բունդ, դաշնակներ, եսերներ, տրոցկիստներ և այլն) դեմ մղած պայքարի պատմության ուսումնասիրություն, ձմեռային քաղդաստիարակության սիստեմի մեջ մտցնելով կոմկուսակցության ազգային քաղաքականության ուսումնասիրությունը, կուսակցական և խորհրդային որգանների առաջ հարց հարուցելով կուսակցության ազգային քաղաքականությունը բոլոր բարձրագույն և միջնակարգ դպրոցներում ուսումնասիրության առարկա դարձնելու մասին։

Կենտկոմն առաջարկում է ՀԼԿՅԵՄ կենտկոմին՝ ուղղել ազգային փոքրամասնությունների մեջ տարվող աշխատանքի թերությունները, ու-

110345/36

ժեղացնելով Կոմինտերնի դեկավարությունն ազգային փոքրամասնությունների բջիջների վրա, նրանց հաշար գործածելով իրենց մայրենի լեզուն։

բ) Կոմյերիտական բջիջների գրավոր և կենդանի կապի ամրապնդումը կոմսոմոլի յեղբայրական կազմակերպություններ հետ ինչպես արտասահմանում, այնպես ել ԽՍՀՄ սահմաններում (Բաքու, Թիֆլիս, Դոնբաս), առանձին ուշադրություն դարձնելով յեղբայրական կոմյերիտական կազմակերպությունների կողմից ազգային-դեմոկրատական, բուրժուական և կրոնական յերիտասարդական կազմակերպությունների դեմ (սոցիալիստական յերիտմիություն, կաթոլիկյան յերիտմիություն, և այլն) մղվող պայքարին։

գ) Ակտիվ հարձակման անցնել յերիտասարդության վրա կղերականության և աղանդավորների ունեցած աճող ազդեցության դեմ, կազմակերպությանը և անկուսակցական յերիտասարդությանը լայն կերպով պարզաբանել հայկական յեկեղեցու հակահեղափոխական բուրժուական եյությունը, նրա անխզելի կապը հայկական ներքին և արտաքին բուրժուազիայի հետ, կազմակերպելով բջիջների հակակրոնական պայքարը (անաստվածների խմբակներ, դասախոսություններ և զրույցներ բնագիտական հարցերի մասին և այլն)։

Առանձնապես անհրաժեշտ է առաջիկայում հրատարակել մասսայական հակակրոնական մատագիր և հակակրոնական գրականություն՝ հայերեն լեզվով։

դ) Բացատրել յերիտասարդությանը կուսակցության գիծն ինտելիգենցիայի մեջ տարվող աշխատանքի առպարիզում, գրավելով նրա լավագույն մասը (մանավանդ ուսուցիչներին ու գյուղատնտեսներին) կոմյերիտական բջիջների գործնական կուլտուրական մասսայական աշխատանքներին։

Կենտկոմն անհրաժեշտ է գտնում բարձրագույն և միջնակարգ դպրոցների զտումը դասակարգայնորեն մեզ անհարազատ տարրերից (կուլակների, ունևորների, քահանաների, սոնատրականների յերեխաներ և այլն), նույնը դասասուների պերսոնալի մասին, առանձին ուշադրություն դարձնելով բանվորների, բատրակների, չքավոր ու միջակ գյուղացիների յերեխաներին դպրոցներում ընդգրկելու վրա, լուծելով սովորողների այս կատեգորիայի նյութական ապահովման հարցը։

ՀԼԿՅԵՄ Կենտկոմը պետք է հարց դնի կուսակցական-խորհրդային մարմինների առաջ մի շարք ուսումնական հիմնարկներ (և մանավանդ 2-րդ աստիճանի դպրոցներ) Հայաստանի տնտե-

սական կարիքներին հարմարեցնելու և գյուղերիտ ու գյուղատնտեսական դպրոցների նյութական դրությունը բարելավելու համար, այդ դպրոցների ակադեմիական և գործնական աշխատանքը կապելով կոլտնտեսությունների շինարարության և սովորողներից առաջավոր կոոպերատոր-գյուղացիներ պատրաստելու համար։

Կոմսոմոլի կոմիտեները պիտի բարելավեն դպրոցական բջիջների աշխատանքի ղեկավարությունը և վերահսկողությունը, նրանցում աշխատելու ուղարկելով տեսականորեն պատրաստված, ժիության պրակտիկային ծանոթ, դասակարգայնորեն,-կոփված բանվոր ակտիվիստների, հաղթահարելով կոմյերիտական բջիջների կտրվածությունն անկուսակցական ուսանողներից։

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2. Սոցիալիստական շինարարությանը մասնակցելու խնդիրները (արտադրության ռացիոնալիզացիան, գյուղատնտեսության կոոպերացումը, պայքար բյուրոկրատիզմի դեմ և այլն) չեն հանդիսացել կոմյերիտական բջիջների աշխատանքի առանցքը։ ՀԼԿՅԵՄ արտադրական կազմակերպությունները թույլ կերպով են զբաղվել բանվոր յերիտասարդության նյութական-

կենցաղային խնդիրների լուծմամբ, իսկ գյուղական կազմակերպությունների պրակտիկայում տեղ են գտել կուսակցության դասակարգային քաղաքականության կոպիտ աղավաղումներ, որի հետևանքով տնտեսատեր-կոմյերիտականների զգալի մասը դարձել է ունևոր և կուլակ։ Կենտկոմը գտնում է, որ կազմակերպության կողմից իդեոլոգիական պայքարի ծավալումն անիմաստ է առանց բջիջների մասնակցությունը տնտեսական-կուլտուրական շինարարության մեջ աշխուժացնելու և առողջացնելու։

Այս նպատակով անհրաժեշտ է.—

ա) Անմիջապես անցնել ՀամլԿՅԵՄ Անդրբյերկոմի հրահանգի կիրառմանը բանվորական բջիջների տնտեսական կրթական աշխատանքի վերաբերյալ։ Աշակերտներին կցել որակյալ բանվորներին, միջոցներ ձեռք առնել, որ ֆաբգործուսներն ավելի լրիվ կերպով ընդգրկեն բրոնիան, յենթարկվեն համապատասխան վերապատրաստման, աշակերտության ուսուցումը դնել ծրագրված հիմքերի վրա, սիստեմատիկ կոնտրոլի յենթարկել աշակերտներին ցածր կարգերից բարձրերին փոխադրելը, ձեռնարկներում կազմակերպելով մշտական աշակերտական հանձնաժողովներ, կազմակերպել յերիտասարդության մասսայական մասնակցությունը ձեռնարկության

ռացիոնալացման գործին, արտադրական վերահսկիչ հանձնաժողովներին, խորհրդակցություններին, քննության առնելով բջիջների և անկուսակցական յերիտասարդության ժողովներում արտադրական պլանները, մերկայնելով տնտեսավարությունը և այլն։ Անհրաժեշտ է վճռական պայքար մղել յերիտասարդության պրոգուլների դեմ, առաջիկա յերեք-չորս ամիսների ընթացքում անցկացնել լավագույն յերիտբանվորի և լավագույն արտադրական բջիջի մրցություն, անկուսակցական բանվոր յերիտասարդությունը ներգրավելով արտադրական և կուլտուր-կրթական խմբակների, ակումբների, դոնբաց ընդհանուր ժողովների աշխատանքներին և այլն։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

բ) Կազմակերպության մեջ պարզաբանել XV համագումարի վորոշումները գյուղում կատարվելիք աշխատանքների մասին, նրանց համաձայն գյուղում կազմակերպելով գյուղական բջիջների աշխատանքը, ամեն մի շրջանում ընտրել բջիջներ, հանձնարարելով նրանց կոմյերիտականների, չքավորների և միջակների տնտեսություններից կոլտնտեսություններ կազմակերպելու գործը, ուժեղացնելով գործնական ոգնությունը արդեն գոյություն ունեցող կոլտնտեսություններին։

Յերկու ամսվա ընթացքում միջոցներ մշակել բջիջների՝ կոոպերացիայի առանձին ճյուղերին ունենալիք մասնակցության վերաբերյալ (այգեգործական, բամբակագործական, կաթնատնտեսական կոոպերացիաների և այլն), բջիջների առաջ դնելով կոոպերացիան սոցիալապես անհարազատ տարրերից զտելու հարցը, աշխատանք ծավալելով չքավորությանը կոոպերացնելու ուղղությամբ, հետևելով վարկերի և չքավորական ֆոնդերի ճիշտ բաշխմանը։

ՀԼԿՅԵՄ կենտկոմին՝ մոտիկ ապագայում պլանավորող կազմակերպությունների և ջրընտեսության հետ միասին մշակել գյուղական բջիջների ճանապարհների և ջրային շինարարության ու մելիորատիվ ընկերությունների աշխատանքներին մասնակցելու հարցը։

գ) Կոմյերիտականների մասսային մոբիլիզացիայի յենթարկել խորհրդային տնտեսության և այլ ապպարատներում յեղած բյուրոկրատական աղավաղումների փաստերի դեմ կռվելու, ոգտագործելով Մոսկվայի և Լենինգրադի «թերթ հեծելազորի» խմբակների աշխատանքի փորձը։

Կենտկոմն առաջարկում է ՀԼԿՅԵՄ Կենտկոմին սրել կազմակերպության ուշադրությունը խորհուրդների առաջիկա վերընտրությունների վրա, անցկացնելով պարզորոշ դասակարգային

գիծ, վերընտրական կամպանիայի ժամանակ կազմակերպելով աշխատավոր յերիտասարդության լայն մասսաներին, բատրակներից ու չքավորներից խորհուրդների մեջ առաջ քաշելով անկուսակցական ակտիվ։

Դրա հետ միասին պետք է կոմյերիտական կադրեր առանձնացնել խորհուրդների սեկցիաներում և հանձնաժողովներում աշխատելու համար։

3. Կազմակերպության մեջ զգալի չափով դասակարգայնորեն և իդեոլոգիապես անհարազատ տարրերի գոյությունը (կուլակներ, ունևոր, քահանաների վորդիներ, դաշյերիտներ և այլն) դընում է կազմակերպությունն անմիջապես նրանցից մաքրելու խնդիրը։ Անհրաժեշտ է.—

ՍՏՈՒԳՈՒՄ ՅԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

ա) Յերեք ամսվա ընթացքում ստուգել կազմակերպության վողջ կազմը, հեռացնելով միությունից անհարազատ տարրերին։ Անմիջապես ցրել այն բջիջները, վորոնց կազմում գերակշռում է կուլակային-ունևոր տարրը, այդ աշխատանքի շուրջը կենտրոնացնելով բատրակ ու չքավոր յերիտասարդության ուշադրությունը, ընդունելով նրան կոմսոմոլի մեջ։

Կազմակերպության սոցիալական կազմի ստուգման ժամանակ կոմյերիտական մասսաներին բացատրել ՀամԼԿՅԵՄ VIII համագումարի վորոշումները միության աճման հարցերի վերաբերյալ։

բ) Կազմակերպությունը դասակարգայնորեն խորթ տարրերից զտելու հետ միաժամանակ լայն կամպանիա ծավալել՝ կոմսոմոլի մեջ ընդգրկելու բանվոր ու բատրակ յերիտասարդությանը, մասնավորապես ոգտագործելով միջյերիտ որվա և կոմսոմոլի տասնամյակի առթիվ ընդունելությունների կամպանիան, ուժեղացնելով բատրակության ու հոտաղների տնտեսա-իրավական շահերի պաշտպանության աշխատանքը, այս նպատակով ոգտագործելով բատրակների ու հոտաղների աշնանային հաշվետեսը (հաշիվների փակելը), դատի տալով այն վարձողներին, վորոնք չեն կիրառում Աշխատանքի Որենսգիրքը և անհատական պայմանագիրը, ընդգրկելով բատրակներին ու հոտաղներին խրճիթ-ընթերցարանների անգրագիտության վերացման խմբակների և բջիջների ընդհանուր ժողովների աշխատանքներին։

Հանձնարարել ՀԼԿՅԵՄ կենտկոմին աշնանը հրավիրել բատրակային յերիտասարդության շրջանային կոնֆերենցիաներ, հետագայում ևս

գործադրելով այդ ձևը, միջոցներ նախատեսելով ալպյան արոտատեղիներում հոտաղների մեջ աշխատելու համար։

4. ԿԵՆՏԿՈՄԸ հանձնարարում է ՀԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻՆ հարց դնել ՀԿ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ առաջ կոմսոմոլի կուսակցական ղեկավարության վողջ սիստեմը վերից վար վերանայելու անհրաժեշտության մասին, վճռական կերպով բարելավելով կուսղեկավարության վորակը և կոմիտեների կողմից սիստեմատիկ կոնտրոլ ստեղծելով ստորին բջիջների կուսղեկավարման աշխատանքի վրա։ Անհրաժեշտ է.—

ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ԲԱՆԱՁԵՎԸ

ա) Վողջ կոմյերիտական կազմակերպությանը և մասնավորապես բջիջներին կուսբջիջների հետ միասին մասնակից դարձնել տնտեսական, խորհրդային, կուսակցական խնդիրների քննությանը, լայն կերպով պարզաբանելով կազմակերպությանը Հայաստանի Կոմկուսի մեջ տեղի ունեցած դեպքերի (ղեկավարության փոփոխումը) իմաստը, վորպեսզի կոմյերիտմիության անդամները ճիշտ կերպով հասկանան կուսակցական ղեկավարության եությունը (կուսակցության առանձին անդամների, ղեկավարների, բջիջների և կազմակերպությունների թույլ

տված սխալների, թերությունների և աղավաղումների քննադատությունը—ի պաշտպանություն ընդհանուր կուսակցական գծի)։

բ) Կոմսոմոլի կուսկոլեկտիվի պատասխանատվության բարձրացումը կուսակցության առաջ կոմյերիտական բջիջների աշխատանքների համար։

գ) Բանվոր, բատրակ և չքավոր կոմյերիտականներին վճռականորեն կուսշարքերն անցկացնելը։

5. Նշելով ստորին կազմակերպությունների թույլ ղեկավարությունը միության կոմիտեների կողմից, ակտիվի մի մասի կտրվածությունը մասսայից, ներմիութենական դեմոկրատիայի թույլ ծավալումը—ԿԵՆՏԿՈՄԻ առաջարկում է.—

ա) Հարմարեցնել ղեկավարությունն առանձին շրջաններին, բջիջների առանձնահատուկ պայմաններին—վերակազմելով ԿԵՆՏԿՈՄԻ և գավկոմների ապպարատը, վերացնելով բաժինները գավկոմներում, առաջ քաշելով աշխատանքի այս կամ այն բնագավառի հրահանգիչ-կազմակերպիչներ, մինիմումի հասցնելով զանազան ժողովներն ու դրանով հնարավորություն տալով ԿԵՆՏԿՈՄԻ և գավկոմների աշխատակիցներին ամսական յերկու շաբաթից վոչ պակաս աշխատել բջիջներում։

բ) Կոմիտեներին կազմակերպել ձրի հրահանգչության խմբակներ, շարքային կոմյերիտականներին ներգրավելով զանազան տեսակի կոմիսիաների աշխատանքների մեջ, առանձին խնդիրներ ու առաջադրություններ մշակելու համար, սիստեմատիկ կերպով հրավիրելով ակտիվի խորհրդակցություններ մեր աշխատանքի առանձին հարցերի և բնագավառների շուրջը (գյուղխորհրդում աշխատողների, բջիջների կոոպկազմակերպիչների և այլն), բջիջների գործնական աշխատանքների մեջ անցնել կոմյերիտական պարտականությունների կատարման կամավոր սկզբունքներին, բջիջներում մասսայականացնելով նախաձեռնող խմբակների աշխատանքը և այլն։

դ) Ընդգծելով, վոր ակտիվի կազմում կան չկոփված, տատանվող և յերբեմն անգամ դասակարգայնորեն անհարազատ տարրեր, ՀամԼԿՅԵՄ Կենտկոմն առաջարկում է վերանայել ակտիվի կազմը, անհրաժեշտության դեպքում կատարելով միութենական մարմինների ժամանակից շուտ վերընտրություններ, վճռականորեն առաջ քաշելով ակտիվ՝ չանվորներից, բատրակներից ու չքավորներից և ընդհանրապես այդ տարրերի զգալի գերակշռություն ստեղծելով միության ղեկավարող մարմիններում։

Կենտկոմն առաջարկում է կազմակերպությանը վճռականորեն կյանքում կիրառել կուսակցության և միության լոզունգն ինքնաքննադատության և ներմիութենական դեմոկրատիայի մասին, ամենակատաղի պայքար մղելով ճնշման, ակտիվի մասսաներից կտրվելու տարրերի դեմ, կոմյերիտական հասարակայնության դատաստանին ներկայացնելով կազմակերպության մեջ յեղած աղավաղումների և թերությունների կոնկրետ փաստերը և ապահովելով միութենական մարմինների լիակատար ընտրությունը։

Մասնավորապես Կենտկոմն առաջարկում է անմիջապես բջիջներում անցնել ինքնաքննադատության ծավալման մասին ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի նախակի քննությանը։ Ինքնաքննադատության ծավալման, ներմիութենական դեմոկրատիայի կիրառումն ապահովելու, ինչպես պետապպարատի, նույնպես եվ միության ղեկավարության բյուրոկրատիզմի դեմ պայքարն ուժեղացնելու գործում տեղական մամուլն ավելի աչքի ընկնող տեղ պիտի գրավի։ Մասնավորապես Կենտկոմն անհրաժեշտ է համարում «Ավանգարդ» թերթը հրատարակել շաբաթը յերեք անգամ։

6. Մատնանշելով ՀԼԿՅԵՄ Կենտկոմի նախ-

կին ղեկավարության կողմից ՀամՀԿՑԵՄ Անդրբյերկոմի հրահանգները չկատարելու վրդովեցուցիչ փաստերը յեվ հավանություն տալով Համ. ՀԿՑԵՄ Անդրբյերկոմի ձեռնարկումներին ՀՀԿՑԵՄ ղեկավարությունը փոխելու գործում, ՀամՀԿՑԵՄ ԿԿ, սակայն, գտնում է, վոր ՀամՀԿՑԵՄ Անդրբյերկոմն անբավարար է կոնտրոլի յենթարկել ՀՀԿՑԵՄ նախկին ղեկավարության կողմից Անդրբյերկոմի առանձին հրահանգների կիրառումը, ժամանակին միջոցներ ձեռք չի առել Հայաստանի կազմակերպության ղեկավարող կադրերը պրոլետարական կադրերով ուժեղացնելու։

Կենտկոմն առաջարկում է Անդրբյերկոմին ուժեղացնել մշտական վերահսկողությունը Հայաստանի ԼԿՑԵՄ կազմակերպության և ՀՀԿՑԵՄ Կենտկոմի աշխատանքի վրա, Հայաստան մշտական աշխատանքի ուղարկել բանվոր ակտիվիստների մի խումբ (10 հոգուց վոչ պակաս) և գործնականորեն ոգնել ՀՀԿՑԵՄ Կենտկոմին կիրառելու կյանքում ՀամՀԿՑԵՄ Կենտկոմի վորոշումները, Անդրբյերկոմի յերկու աշխատողներին ուղարկել մեկ ու կես ամսից վոչ պակաս ժամանակով ոգնելու կազմակերպությանը։

«Ազգային գրադարան»
NL0184990